Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում հավանության արժանացած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՀ Կառավարությունը 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում հավանության է արժանացրել և սահմանված կարգով Ազգային ժողովին ներկայացրել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով առաջարկվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որն առնչվում է տեղեկատվության ազատության սահմանափակումներին, լրացնել 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ,

«***Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե այն կարող է բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի, այդ թվում՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի վրա:»:***

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ Նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների, մասնավորապես՝ 1998 թվականի հունիսի 25-ին Դանիայի Օրհուս քաղաքում Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրած և 2001 թվականի հունիսի 27-ին վավերացրած ***Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայի (այսուհետ՝Օրհուսի կոնվենցիա)*** 4-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի դրույթների ներպետական օրենսդրությամբ իմպլեմենտացմանն ու մոտարկմանը:

Վերոգրյալի առնչությամբ նախ հարկ ենք համարում նշել, որ Նախագծի հիմնավորման մեջ Օրհուսի կոնվենցիայի հոդվածների դրույթները ընտրովի և հատվածական են

ներկայացված, ինչն էլ հնարավորություն չի տալիս գնահատելու, թե Օրհուսի կոնվենցիայի դրույթների պահանջները մեր ներպետական օրենսդրությամբ, արդյոք, անպայմանորեն հենց Նախագծով առաջարկվող կարգավորումների տեսքով պետք է իմպլեմենտացվեն, թե՞ հնարավոր է, որ կոնվենցիան՝ այն վավերացրած երկրներին հնարավորություն է տալիս այլ մոտեցումներ որդեգրել: Օրինակ, Օրհուսի կոնվենցիայի «Ընդհանուր դրույթներ» վերտառությամբ 3-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝

«5. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն շոշափում որևէ Կողմի իրավունքը՝ ***շարունակելու իրագործել կամ ձեռնարկել միջոցներ, որոնք ենթադրում են տեղեկության ավելի լայն մատչելիություն, հասարակության ավելի ակտիվ մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին և արդարադատության ավելի լայն մատչելիություն բնապահպանական հարցերով, քան դա նախատեսված է սույն Կոնվենցիայով:***

6. Սույն Կոնվենցիան ***չի պահանջի գոյություն ունեցող իրավունքների որևէ թուլացում***, որոնք կապված են տեղեկության մատչելիության, հասարակության մասնակցությանը որոշումների ընդունման գործընթացին և արդարադատության մատչելիությանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերի կապակցությամբ:

Նշվածը վկայում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի գործող կարգավորումները, որոնց համաձայն՝ ***տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա ներկայացնում է*** Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև **բնության և շրջակա միջավայրի պաշտպանության**, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը, ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետությունն օրենսդրական կարգավորումների մակարդակում երաշխավորվող ***տեղեկության ավելի լայն մատչելիությունը***՝ բնապահպանական հարցերով ավելի արդարացված է, քան Կոնվենցիայով նախատեսված հնարավոր սահմանափակումները: Ուստի, Նախագծով շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակմանն առնչվող կարգավորումների սահմանումը՝ պայմանավորելով Օրհուսի կոնվենցիայի պահանջների հետ, հիմնավոր չէ:

Երկրորդ. Նախագծի հիմնավորման մեջ մեջբերվում են ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներ (12-րդ, 42-րդ, 51-րդ,), սակայն Նախագիծը մշակող իրավասու մարմինը Նախագծով նման կարգավորումներ սահմանելով՝ չեն պահպանել ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների պահանջները, մասնավորապես՝

- 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման ***համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն*** Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները ***պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը***:
- 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները ***պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:***

Այդ առնչությամբ գտնում ենք, որ Նախագծի հիմնավորման մեջ բավարար չափով բացահայտված չէ, թե օրենքով շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ մտցնելու Նախագծով առաջարկվող կարգավորումներն իրենց բնույթով որքանով են ***պիտանի և անհրաժեշտ*** Սահմանադրությամբ երաշխավորված անձի կարծիքի արտահայտման ազատության և տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակման համար, ինչպես նաև Նախագծով անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանվել, թե որ դեպքերում լիազոր մարմինը կարող է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժել՝ պարարտ հող նախապատրաստելով հնարավոր անհամաչափ սահմանափակումների համար, որոնց արդյունքում, ի թիվս այլոց, կարող է վնաս հասցվել հենց բնությանը:

Նախագծի հրապարակման առաջին իսկ օրվանից քաղաքացիական հասարակության բազմաթիվ կառույցներ, բնապահպաններ, լրագրողներ ահազանգել են Նախագծով առաջարկվող կարգավորումներում ներառված վտանգների մասին՝ ընգծելով, որ այն հայեցողական լիազորություն է տալիս լիազոր մարմնին մերժելու շրջակա միջավայրին առնչվող ցանկացած տեղեկատվության տրամադրումը:

Ուստի, կոչ ենք անում ներկա արտակարգ դրության պայմաններում դադարեցնել վերոնշյալ օրինագծի շրջանառությունը, և դրա շուրջ պատշաճ հանրային և մասնագիտական քննարկումներ կազմակերպել արտակարգ դրության դադարեցումից հետո:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհուրդ
«ՀԿ Կենտրոն» ՔՀԶԿ
Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն

«Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» ՀԿ
«Իրավունքի և ազատության կենտրոն» ՀԿ
«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
«Թուխմանուկ իրավապաշտպան և կրթական կենտրոն» ՀԿ
«Հայաստանի համայնքների միություն» ՀԿ
«Հավասար հնարավորությունների աջակցության հիմնադրամ»
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, Քարտուղարության համակարգող

Սույն հայտարարությունը ընդունվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի հեռավար եղանակով գումարված նիստում՝ 2020 թ.-ի ապրիլի 5-ին:

06.04.2020